



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



**ՀՈԳԵՐԱՆԳԻՍՏ՝ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՑԻՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ
 ՀԱՅԿԱԿԱՆ ՕՂԱՆԱԿԻ ԱՐԿԱԾԻ ՉՈՐՏԵՐՈՒՆ ՅԻՇԱՏԱԿԻՆ**

Հայկական օղանաւի ծանօթ արկածին հետեւանքով, որ պատահած էր Չորեքշաբթի, 3 Մայիսի կանուխ առաւօտուն, Հայաստանն ու Սփիւռքը՝ պետական ու ժողովրդային մակարդակներու վրայ, սուգի մատնուած էին անցեալ շաբաթավերջին:

Այս տխուր առիթով, Արեւմտեան մեր Թեմին մէջ եւս եկեղեցական յատուկ արարողութիւններ տեղի ունեցան ի յարգանս աղետալի արկածին զոհերուն: Արդարեւ, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեանի տնօրինումով, Կիրակի, 7 Մայիսին, մեր բոլոր եկեղեցիներուն մէջ, յաւարտ Ս. Պատարագի, հոգեհանգստեան արարողութեան պահուն յատուկ յիշատակում կատարուեցաւ ի յարգանս զոհերուն ու մեր հաւատացեալ ժողովուրդը աղօթեց անոնց հոգիներուն համար:

Առաջնորդ Սրբազանը նախագահեց Ս. Նահատակաց եկեղեցւոյ արարողութեանց: Ներկայ էին Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր հիւպատոս Գագիկ Կիրակոսեան, Ազգային Վարչութեան ատենապետ Տիար Հրայր Պալեան, Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Տիար Գօգօ Թօփալեան, Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան, ազգային բարերարներ եւ բազմահարիր հաւատացեալներ:

Օրուան իր պատգամին մէջ, Առաջնորդ Սրբազանը յատուկ յիշատակութիւն կատարեց օղանաւի արկածին ու անգամ մը եւս վշտակցութիւն յայտնեց հայրենի պետութեան ներկայացուցիչին ու ցաւակցական խօսք ուղղեց զոհերու ընտանեկան պարագաներուն: Ան յիշեցուց, որ քանի մը շաբաթ առաջ, ազգովին խոնարհեցանք Յեղասպանութեան նահատակներուն յիշատակին առջեւ, իսկ այսօր, այս արկածի զոհերն ալ կը նկատուի նահատակներ: Առաջնորդ Սրբազանը կոչ ուղղեց մեր ժողովուրդին՝ աղօթելու զոհերու հոգիներուն համար եւ մաղթեց, որ բարձրեալն Աստուած մեր ժողովուրդը պահէ անվտանգ:

ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԿՈՅԻ ՈՒ ԼԱՍ ՎԵԿԱՍԻ ՄԷՋ

Յայտնենք, որ Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն Գերպ. Տ. Միւռն Ծ. Կրդ. Ազնիկեան Կիրակի օր Ս. Պատարագ մատուցանեց Սան Ֆրանսիսքոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Արկածի զոհերուն յիշատակին հոգեհանգստեան արարողութեան կողքին, տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտներուն յատուկ արարողութիւն մը: Հայր Միւռն յատուկ ժապաւեններ յանձնեց աւելի քան 20 սկաուտներու եւ արեւոյշներու, որոնք բոլորած էին Հ.Մ.Ը.Մ.ի «Մետրոպ Մաշտոց» ծրագիր-դասընթացքին առաջին բաժինը: Ծրագրի երկրորդ բաժինին յաջողութեամբ ամբողջացումէն ետք, այս սկաուտները կ'արժանանան «Մետրոպ Մաշտոց» շքանշանին:

Իսկ Ս. Աստուածածին եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւներէն Արժ. Տ. Արտակ Քնյ. Տեմիրճեան Ս. Պատարագ մատուցեց Լաս Վեկասի մէջ, ուր, ինչպէս ծանօթ է, ծխական կեանքը վերաշխուժացման մէջ է վերջին ամիսներուն: Առաջնորդ Սրբազանին ու Կրօնական ժողովին տնօրինումով, ու քաղաքի Ծխական Յանձնախումբին հետ

գործակցաբար, իւրաքանչիւր ամսուան առաջին Կիրակին Ս. Պատարագ կը մատուցուի Լաս Վեկասի մէջ: Ս. Պատարագը սկսաւ յետմիջօրէի ժամը 3ին: Երգեցողութիւնը կատարեց Ս. Նահատակաց դպրաց դասու անդամներէն խումբ մը: Յաւարտ Ս. Պատարագի, հոգեհանգստեան պաշտօն տեղի ունեցաւ «Արմաւիա»ի օդանաւի արկածին, ինչպէս նաեւ ծխական համայնքի հին ու նոր ննջեցեալներու հոգիներուն համար: Տէր Հայրը այս առիթով նաեւ հաւատացեալներուն փոխանցեց Առաջնորդ Սրբազանին ողջոյններն ու յաջողութիւն մաղթեց ծխական յանձնախումբի աշխատանքներուն:

REQUIEM SERVICES HELD IN PRELACY CHURCHES FOR PLANE CRASH VICTIMS

On Sunday, May 7, by the directive of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, special requiem services took place in all of the Western Prelacy churches in memory of the victims who perished in the plane crash that occurred on Wednesday, May 3rd.

The Prelate presided over Holy Mass at Holy Martyrs Church in Encino. In attendance were the Honorable Gagik Giragossian, Consul General of Armenia, Executive Council Chairman Mr. Hrair Balian, A.R.F. Central Committee representative Mr. Koko Topalian, H.E. Archbishop Vatche Hovsepien, and hundreds of faithful.

In his sermon, the Prelate made a special reference to the lives lost in the plane crash and once again expressed his condolences to the Consul General and to the families of the victims. The Prelate urged the faithful to pray for the souls of the deceased and prayed to Almighty God to keep us all away from harm.

IN SAN FRANCISCO AND LAS VEGAS

On Sunday, May 7, Very Rev. Fr. Muron Aznikian, co-director of the Prelacy Christian Education Department conducted Holy Mass at St. Gregory Church in San Francisco. Alongside the special requiem services for the plane crash victims, a special service took place for H.M.E.M. scouts. Very Rev. Fr. M. Aznikian presented the more than 20 scouts with ribbons for completing the first part of the “St. Mesrob Mashdots” program. After successful completion of the second part of the program, the scouts will be awarded with the “St. Mesrob Mashdots” medal.

On the same day, Rev. Fr. Ardag Demirjian of St. Mary’s Church conducted Holy Mass at the Las Vegas parish where requiem services also took place for the plane crash victims. Several members of the Holy Martyrs church choir took part in the ceremonies. Under the direction of the Prelate and the Religious Council and in collaboration with the city’s parish council, Mass is offered on the first Sunday of each month. On this occasion, Rev. Fr. A. Demirjian conveyed the Prelate’s blessings to the parishioners and bade success to the new parish council’s endeavors.